ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՑ ԳՐՔԵՐԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Առաջին հայացքից՝ Գ և Դ Թագավորաց գրքերը
Իսրայելի թագավորների պատմությունն են.
իրականում Գ և Դ Թագավորաց գրքերը գրվել են
Սուրբ Հոգու ներշնչմամբ այնպես, որ դրանք կապված են
Աստծու հավիտենական տնտեսության հետ, որը բացահայտվում և
փոխանցվում է ըստ նախատիպերի և իրագործվում
Աստծու ընտրյալների կողմից երկրի վրա:**

**Իսկական քրիստոնեական կյանքը եկեղեցու՝
որպես Աստծու տաճարի կառուցման համար,
խաչված և հարուցանված Քրիստոսի՝
որպես կենդանարար Հոգու կյանքն է, որը ներկառուցվում է
մեր էության մեջ այնպես, որ մենք Նրա հարության զորությամբ
կերպարանակցվում ենք Նրա մահվանը՝
եկեղեցում Նրա փառքի համար օրեցօր նորոգվելով
ու փառքից փառք փոխակերպվելով:**

**Աստծու փառքը՝ փառահեղորեն արտահայտված Աստված,
լցրեց Աստծու տաճարը, ինչը նշանակում է, որ Աստծու փառքը, որը
ներհատուկ կերպով կապված է Աստծու տնտեսության հետ ու
ներդրված սրբերի մեջ, եկեղեցում և Քրիստոս Հիսուսի մեջ
փառք կդառնա առ Աստված բոլոր սերունդների մեջ,
և ամբողջ Նոր Երուսաղեմ քաղաքը հավիտյան կկրի Աստծու փառքը,
որն Աստված Ինքն է, ով փայլում է քաղաքի միջոցով:**

**Նոր Կտակարանում հաղթողները պետք է լինեն թագավորները,
որոնք ստացած կլինեն շնորհքի առատությունը և
արդարության շնորհը՝ կյանքում թագավորելու համար.
կյանքում թագավորելու համար մենք պետք է լինենք
Հոգու կառավարման ներքո ու պետք է վայելենք
Տիրոջ ներկայությունը, որը ներառում է
Տիրոջ իշխանությունը,
բարգավաճումը և օրհնությունը:**

© 2022 Living Stream Ministry

Առաջին հաղորդում

Երրորդ և Չորրորդ Թագավորաց գրքերում եղող խորքային հայտնությունը Աստծու տնտեսության վերաբերյալ՝ նախատիպերի միջոցով բացահայտված ու փոխանցված

Գրվածքների ընթերցում. Եփս 1:10, 22-23, 3:9, Կող 2:9, 3:11, Ա Տմթ 1:4, Ա Թգ 2:11-12, 6:1-2

I. Աստվածաշունչը գիրք է Աստծու տնտեսության մասին՝ Ծնդ 1:1, 26-28, Հյտ 21:1-2, 9-11.

Ա. Ամբողջ Աստվածաշունչը՝ և՛ Հին Կտակարանը, և՛ Նոր Կտակարանը, նախ՝ Աստծու տնտեսության նկարն է, իսկ հետո՝ Աստծու տնտեսության ամբողջական սահմանումը և իրականացումը՝ Եփս 1:10, Ա Տմթ 1:4:

Բ. Աստվածաշունչն Աստծու հավիտենական տնտեսության վերաբերյալ աստվածային հայտնության գրառում է, որի կենտրոնը և իրականությունը Քրիստոսն է՝ Հվի 14:6, Կող 1:15, 3:11.

1. Քրիստոսը Եռամեկ Աստծու մարմնացումն է, իսկ եկեղեցին՝ Քրիստոսի Մարմինը՝ 2:9, Եփս 1:22-23:
2. Քրիստոսը և եկեղեցին Աստվածաշնչի հիմնական կառուցվածքն են՝ Եփս 5:32:

Գ. Աստծու տնտեսությունը՝ Աստվածաշնչի բանալին, Եռամեկ Աստված է՝ Իր ծրագրով ու կարգավորմամբ հանդերձ, որն Իրեն Իր Աստվածային Երրորդությամբ Իր ընտրած, փրկագնած ու վերածնած մարդկանց մեջ բաշխելու համար է՝ որպես նրանց կյանքը, նրանց կենսամատակարարումը և նրանց ամեն ինչը, որպեսզի նրանք դառնան Իր ընդհանրական արտահայտությունը՝ սկզբում որպես Քրիստոսի Մարմինը, իսկ վերջում՝ որպես Նոր Երուսաղեմը.

1. Եթե տեսնենք, որ Աստծու տնտեսությունն Աստվածաշնչի բանալին է, մենք Աստվածաշնչի յուրաքանչյուր գիրք ուսումնասիրելիս այս բանալին կօգտագործենք:
2. Եթե մենք տեսնենք այս բանալին և օգտագործենք այն, Աստվածաշունչը մեզ համար կդառնա այն, ինչ Աստծու համար է՝ աստվածային տնտեսության հայտնությունը՝ Ղկս 24:44-46:

I. Գ և Դ Թագավորաց գրքերի հոգսը ոչ թե պատմական փաստերն են, այլ այս գրքերի խորքային հայտնությունները.

Ա. Պատմության խորքային հայտնությունը՝ ըստ Հեսուի գրքից մինչև Եսթերի գիրքն ընկած գրառման, մեզ համար բացահայտում է, թե ինչպես են Աստծու ընտրյալները Նրա հավիտենական տնտեսությունն իրագործել երկրի վրա՝ Հս 1:1-9, Ա Թգ 16:12-13, Գ Թգ 2:11-12, 6:1-2:

Բ. Առաջին հայացքից Գ և Դ Թագավորաց գրքերն Իսրայելի թագավորների պատմությունն են. իրականում, Գ և Դ Թագավորաց գրքերը գրվել

են Աստծու Հոգու ներշնչմամբ, Աստծու հավիտենական տնտեսության առնչությամբ՝ Եփս 3:9, Ա Տմթ 1:4:

Գ. Դավիթն ու Սողոմոնը՝ որպես նախատիպեր, այն բանի ակնառու ապացույցներ են, որ Իսրայելի թագավորների պատմությունը կապված է Աստծու տնտեսության հետ, որը վերաբերում է Քրիստոսին՝ որպես Աստծու մարմնավորմանը, և եկեղեցուն՝ որպես Քրիստոսի Մարմնին՝ Եփս 5:32:

Դ. Քանի որ Սողոմոնը և նրա կառուցած տաճարը մեծ դեր են խաղում Իսրայելի պատմության մեջ և այդ պատմության մեջ լայն ոլորտ զբաղեցնում, դրանք ապացույցն են այն բանի, որ Իսրայելի պատմությունը ուղղակիորեն կապված է Հին Կտակարանում Աստծու հավիտենական տնտեսության իրականացման հետ՝ նախատիպերի տեսանկյունից՝ Ղկս 24:44.

1. Այն, որ Քրիստոսն ու եկեղեցին Աստծու տնտեսության կենտրոնականությունն ու տիեզերականությունն են, համընդհանուր միտք է և՛ Նոր Կտակարանում, և՛ Հին Կտակարանում՝ Մտթ 16:16-18:
2. Մենք պետք է տեսնենք, որ պատմության գրքերը գրված են Քրիստոսի և եկեղեցու վերաբերյալ Աստծու հավիտենական տնտեսության տեսանկյունից՝ Եփս 5:32:

Ե. Գ և Դ Թագավորաց գրքերը կարդալիս պետք է տեսնել Հին Կտակարանի պատմության գրքերի և Նոր Կտակարանի միջև եղող կապակցող օղակը. այս կապակցող օղակն Աստծու տնտեսությունն է՝ նախատեսված Քրիստոսի և Քրիստոսի Մարմնի համար՝ Եփս 1:22-23, 3:17, 4:16:

III. Հին Կտակարանի պատմությունը նախատիպերի տեսանկյունից սերտորեն կապված է Աստծու տնտեսության հետ՝ Եփս 3:9, Ա Կրթ 5:7, 10:6.

Ա. Հին Կտակարանը Աստծու հավիտենական տնտեսության պատկերավոր արտահայտությունն է, իսկ Նոր Կտակարանը՝ Աստծու հավիտենական տնտեսության գործնական իրականացումը:

Բ. Ծննդոցից մինչև Երկրորդ Օրինաց գրքերի նախատիպերը բացահայտում են Եռամեկ Աստծուն՝ մարմնավորված Քրիստոսի՝ որպես Իր հավիտենական տնտեսության կենտրոնի և շրջագծի մեջ, ինչպես նաև Քրիստոսին՝ որպես Եռամեկ Աստծու ընտրյալ ժողովրդի համար օրինության և ամեն ինչի՝ Երկ Օր 8:7-11:

Գ. Պատմության տասներկու գրքերը՝ Հեսուից մինչև Եսթեր, բացահայտում են Եռամեկ Աստծու շարժումն Իր ընտրյալ մարդկանց մեջ, որպեսզի նրանք տիրեն, ժառանգեն ու վայելեն Նրա խոստացած համաբովանդակ Քրիստոսին՝ որպես բարի երկրի՝ Հեսու 1:1-9, 13, Եսթ 4:13-14:

Դ. Բանաստեղծական գրքերը՝ Հոբի գիրքը, Սաղմոսները, Առակացը, Ժողովողն ու Երգ Երգոցը, բացահայտում են, որ Քրիստոսն Աստծու ընտրյալ մարդկանց համար միակ կատարելությունն է, որին նրանք պետք է ձգտեն, և միակ բավարարվածությունը, որին Աստծու ընտրյալ ժողո-

վուրդը պետք է ստանա ու վայելի՝ Հոբ 42:1-5, Սղմ 2:6-12, 8:1, Երգ 1:2-4, 6:1, 10, 13, 8:1, 14:

Ե. Մարգարեության տասնյոթ գրքերում՝ Եսայայից մինչև Մաղաքիա, տեսնում ենք, որ Եռամեկ Աստված դարձել է Աստվածամարդ, որպեսզի կատարի Իր լիակատար փրկագնումը՝ իրագործելու համար Իր հավիտենական տնտեսությունը, որը կավարտունանա նոր երկնքում և նոր երկրում՝ Եսյ 9:6, Հյտ 21:1:

Զ. Մատթեոսից մինչև Հովհաննեսի Ավետարանները բացահայտում են, որ Եռամեկ Աստված պատրաստվել և ավարտունացել է՝ դառնալով համաբովանդակ կենդանարար Հոգին՝ Հվի 1:14, 7:39:

Է. Գործք Առաքելոց գիրքը բացահայտում է, որ համաբովանդակ կենդանարար Հոգին տարածվում է որպես Քրիստոսի՝ Աստծու մարմնավորման իրականությունը՝ Աստծու եկեղեցիներն առաջացնելու համար՝ 1:3, 8, 2:22-36, 4:23-31:

Ը. Հռոմեացիներին ուղղված թղթից մինչև Հայտնության գիրքը բացահայտում են, որ համաբովանդակ կենդանարար Հոգին փոխակերպման միջոցով կառուցում է եկեղեցիները՝ դրանք դարձնելով ավարտունացած Եռամեկ Աստծու օրգանիզմը՝ որպես Քրիստոսի Մարմինը, որը կավարտունանա Նոր Երուսաղեմում՝ որպես ավարտունացած Եռամեկ Աստծու հավիտենական ընդարձակման մեջ՝ Հռմ 1:3-4, 12:4-5, 16:20, Հյտ 21:2, 9-11:

IV. Գ և Դ Թագավորաց գրքերի խորքային հայտնությունը բացահայտվում և փոխանցվում է նախատիպերի միջոցով.

Ա. Իսրայելի պատմությունը ոչ միայն ամբողջ եկեղեցու նախատիպն է, այլև Աստծու տնտեսության՝ Ա Տմթ 1:4:

Բ. Իսրայելը եկեղեցու՝ որպես Աստծու նորկտակարանյան ընտրյալների նախատիպն է՝ Ա Կրթ 5:7, 10:6.

1. Աստծու մտադրությունն ընդհանրական Մարմին ունենալն է՝ Եփս 1:22-23.
   - ա. Այս ընդհանրական Մարմնի համար, որի նախատիպն է Իսրայելի ազգը, Աստված Իրեն ներդրեց ընդհանրական Իսրայելի մեջ, որպեսզի նրանք երկրի վրա Աստծու տունը, Աստծու բնակատեղը դառնան՝ Եզ 25:8-9, 40:34:
   - բ. Այս ընդհանրական Իսրայելը եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի նախատիպն է:
2. Իսրայելի ամբողջ պատմությունը եկեղեցու նախատիպն է. Պողոսն Իսրայելի զավակների պատմությունը կիրառում է նորկտակարանյան եկեղեցական կյանքի հանդեպ՝ Ա Կրթ 5:7, 10:6:
3. Հին Կտակարանում տեսնում ենք ժողովուրդ՝ Իսրայելը, և Նոր Կտակարանում ենք ժողովուրդ տեսնում՝ եկեղեցին. այս երկու ժողովուրդները մի բանի նկարագրություն են, որ Աստված է արել, այն է՝ Աստծու տնտեսության իրագործումը՝ Եփս 1:10, 3:9:

Գ. Դավիթը չարչարվող Քրիստոսի նախատիպն է, իսկ Սողոմոնը՝ Աստծու թագավորությունում փառավորված Քրիստոսի և դրա փառահեղության՝ Գ Թգ 2:11-12:

Դ. Տաճարը Քրիստոսի և եկեղեցու՝ որպես տիեզերքում Աստծու եզակի կառույցի նախատիպն է՝ Մտթ 12:6, 16:18:

Ե. Եղիսե մարգարեն ներկայացնում է Աստծու նորկտակարանյան տնտեսությունը նախատիպերում. նա հինկտակարանյան մի նախատիպ է, որը խորհրդապատկերում է նորկտակարանյան իրական բաները՝ Գ Թգ 4:9:

Զ. Հեզաբելը՝ մի շատ ատելի անձնավորություն, Աքաաբի հեթանոս կինը, այն բանի նախատիպն է, ինչ Հեզաբելն է նորկտակարանյան իրականության մեջ. ուրացող եկեղեցու նախատիպը՝ Գ Թգ 16:31, 19:1-2, 21:23, Հյտ 2:20-23:

Է. Ըստ նախատիպերի՝ թագավորական պալատները և Աստծու տաճարն առանձին էին, մինչդեռ նորկտակարանյան իրականության մեջ այս երկուսը մեկ կառույց են՝ Գ Թգ 9:15, Եփս 2:21-22.

1. Մի կողմից՝ մենք՝ նորկտակարանյան հավատացյալներս, քահանաներ ենք, որպեսզի ծառայենք և երկրպագենք Աստծուն՝ Ա Պտ 2:9:
2. Մյուս կողմից՝ մենք Աստծու թագավորներն ենք, որպեսզի Աստծու համար թագավորենք՝ Հյտ 1:6, 9, 5:10:

Ը. Թագավորները նորկտակարանյան հավատացյալների նախատիպերն են, քանի որ Աստված նորկտակարանյան բոլոր հավատացյալներին փրկել է, որպեսզի նրանք թագավորներ լինեն՝ Հյտ 1:6, 9, 5:10.

1. Նորկտակարանյան հավատացյալները պետք է Աստծու տնտեսության մեջ թագավորների նախատիպի իրագործումը լինեն՝ Հռմ 5:17, 21:
2. Նոր Կտակարանում բոլոր հավատացյալները փրկվել են, որպեսզի թագավորներ ու քահանաներ լինեն՝ Ա Պտ 2:9, Հյտ 1:6, 5:10, Բ Տմթ 2:12.
   - ա. Աստված իշխում է, բայց Նա ուղղակիորեն չի իշխում. Նա մեր՝ հավատացյալներիս միջոցով է իշխում՝ Հյտ 20:4, 6, 3:21:
   - բ. Մենք աստվածային, հոգևոր, երկնային, թագավորական և արքայավայել կյանքով ենք վերածնվել. սա մեզ գահակալել է տալիս որպես թագավորների, որոնք ամեն բանի վրա են՝ Հվի 1:12-13, 3:3, 5, Հյտ 5:10, Հռմ 5:17, 21:

V. Պատմության գրքերը ներառվել են Սուրբ Գրվածքներում, քանի որ ըստ նախատիպերի՝ դրանք Աստծու տնտեսության վառ պատկեր են ցույց տալիս. Հին Կտակարանի նախատիպերի էությունն Աստծու տնտեսությունն է, որի կենտրոնը և իրականությունը Քրիստոսն ու Նրա Մարմինն են՝ Եփս 1:9, 3:9, 5:32:

© 2022 Living Stream Ministry